



5. ԱՖԱՆԴՈՒ ՀԵՔՅԱԹԸ

Ժամանակով մե թագավոր կար, ուներ մե ավչի, էտ ավչին ամեն ժամանակ կէթեր, ավ կէներ թագավորի համար: Մե օր գնաց. մե ղուշ նստուկ էր: Ղուշը բռնեց, առավ էկավ, շատ ծանդր ղուշ էր, խորոտատես ղուշ էր, էլ չըտարավ տվեց թագավորին, բերեց դրեց ուր տուն: էտ ավչուն ուներ մեր, մորն ասավ, թե՝ նանե՛, իմ ղչին մուղա՛թ կաց: Ավչին գնաց մոտ թագավոր, թագավորն ասավ. «Ավչի՛, էսօր ավ չըբերի՞ր»:

Ասավ. — Չէ՛, թագավո՛ր, էսօր ավ ձեռ չընկավ:

Մե օրից ետ ավչու մերը հելավ գնաց դրկցի տուն, էկավ տեսավ թամուզ, ավլած, տեղեր վերցած, թունդի վառված, խացը թխած, կերակուլն պատրաստ, շիվարավ, ասավ. — Իմ տուն ինձեն սավայի մարդ չըկա, էս ո՞րն պատրաստեց:

Պառավն սկսեց պախ դնել, տեսավ, որ ղուշն է. դավասի միջեն հելավ, ուր շապիկ հանեց, դառավ մեկ սիրուն ախչիկ, իջավ էկավ, թոնիրը վառեց, հաց թխեց, կերակուլ էփեց, պըտի էրթար, որ շապիկը հագնեք, պառավը հետևից բռնեց, շատ ուրխըցավ, թե Աստված ընձի հարս կամեցավ: Վազեվազ գնաց պառավը մոտ տղեն, աչքալուսենք տվեց տղին, թե քու բերած ղուշն դառավ մեզի խարս: Տըղեն էլ էկավ տեսավ, շատ ուրախացավ: Պսակվան, էլան մարդ ու կնիկ:

Թագավորն ու ուր վազիրը, սահմանք կար, կըլնին քաղքի մեջ կըպըտըտին: Թագավորն էկավ ուր ավչու դռնով ընցավ, աչքը առավ ավչու կնկան: Ասավ. «Վազի՛ր, էսի ո՞րքան տեսակով ախչիկ ա»: Ետ դառցավ էկավ ուր տուն թագավոր, ասավ վազիրին. «Գնա իմացի՛ր, տե՛ս՝ էն կնիկը ի՞նչ մարդի կնիկ ա»:

Վազիրը գնաց իմացավ, էկավ թագավորին ասավ. — Թագավո՛ր, մեր ավչու կնիկն ա:

— Վազի՛ր, մեր ավչուն կնիկ չըկար, հո՞ւստ էլավ, գնա մեր ավչուն դանչա՛, գա:

Վազիր գնաց, ավչուն դանչեց, ավչին էկավ թագավորի կուշտ:

Թագավորն ասավ ավչուն. — Ավչի՛, էտ կնիկ հո՞ւստ ես առե:

—Թագավոր, Աստված է կամեցե:

Թագավոր շատ բարկացավ ավչու վրա.—Ես քեզի կօղորկեմ ավի, որ դու էթաս Հալդի կնկտեր փախցուս բերես: Ավչի՛, գնա՛ ընտե, որ չիտես էնի, բերես էնի, որ չիտես էնի:

Ավչին մնաց չիվար. ետ դարձավ տրտում, էկավ ուրան տուն:

Կնիկն ասավ.—Ավչի՛, ինչի՞ ես նիաթդ կախես:

Ավչին ասավ.—Թագավորը ընձի ղազաբի ա էկե:

—Ընչի՞ համար:

—Քեզի վրա:

—Ի՞նչ կասա քեզի:

—Կնի՛կ, ինձի կասա՛ գընը ընտե, որ չիտես էնի, բերես էնի, որ չիտես էնի:

Կնիկն ասավ ավչուն.—Ի՞նչ անեմ, ես քեզի չասի՞ իմ շապիկն մի՛ էրիցա, ես քեզի պետք կուզամ նեղ տեղի. մկա ես էլ չեմ կանա թունի, չեմ կանա էթա, ընձի որդուց բերիր, ավչի՛, գնա՛ ընտե, իմ քրեր էնտե են, Թագավորի ուզած իմ քրեր կրտան, կրբերես, կուզաս: Ավչի՛, ա՛ռ էս իմ փեշկիր, կապա՛ մեջքդ, իմ քրեր, որ քե տենան, շատ կուրախանան, թե մեր փեսեն էկավ: Զուր կրբերեն, դու կըլվացվիս, փեշքիր կրտան, չըսրբըվես, ընդոնց փեշքըրով, որ սրբըվես, քեզի կանեն ճոպան կրքցեն աշխարքի մեջ, կըկտրտիս: Կըխարցուն, թե՛ փեսա՛, ինչի՞ ես էկե: Ասա՛ Թագավոր՛, ձեր քրոջ վրեն ինձի նեղութեն կրտա:

Ավչին գնաց, գնաց, խասավ էտ մեշեն. գնաց էն ծառի կուշտ, որ էն դուռ բռներ էր, տեսավ, որ էնտեղեն էրկու ախչիկ էկան:

—Ահա՛, էս մեր ավչի փեսեն էկեր է, —ասին, —բարո՛վ, փեսա՛, բարո՛վ, խեր ըլնի գալդ:

—Փա՛ռք Աստու, քենինե՛ր, խեր ա:

—Արի՛, փեսա՛ ջան, արի էթանք մեր տուն:

Քենիք փեսին տարան տուն, լավ պատվեցին, կերցուցին, խըմցուցին, պառկեցուցին, քընցուցին:

Որ քնավ հիմցավ՝ ջուր բերին, ասին.—Լվացվի՛, փեսա՛:

Փեսեն լվացվավ: Փեշքիր տվին, ասին՝ սրբըվի՛:

—Ձե՛, քենի՛ք, —ասավ, —չնորհակալ եմ, ինձի փեշքիր ունեմ:

Ավչին ուր փեշքիրով սրբըվավ, ետո նստան խարց ու փորձ արին:

—Ընչի՞ ես էկե, փեսա՛, —ըսին, —խե՛ր ըլնի:

—Մե գործ ա պատահե, քենի՛ք:

—Ի՞նչ գործ ա:

—Ձեր քվոր վրա Թագավոր ինձի նեղութեն կրտա:

—Ընչի՞ համար:

—Եսիմ ընչի՞ համար:

—Հապա քեզնից ինչ գուզե թագավոր:

—Ընծնից էն կուզա, որ կասա. «Գընը՝ ընտե, որ չիտես էնի, բերես էնի, որ չիտես էնի»: Ձեր քուրն ընծի օղորկեց մոտ ձեզի: Էկա մոտ ձեզի, մկա դուք գիտեք:

—Դե նստի՛, ավչի՛, նստի՛, մենք տենանք՝ ինչ անենք:

Գնացին էնքան պըտըտան, թե ծովերի կղզին, թե ծովերի տակ, թե մեշեքի մեջ, թե սարերի գլխըներ, որդե գնացին, չըկարցան գտնել, դարձան էկան, ասին. —Փեսա՛, քու ուզած մեր կուշտ չէ: Բերին մե գիր գրեցին Քաջաց թագավորին, տվին, ավչին առավ գնաց, տարավ Քաջաց թագավորի կուշտ, տվեց Քաջաց թագավորին, Քաջաց թագավորը առավ իշկաց, ընդունեց ըզրա խընդիրը, դանչեց ուրան վագիրներին՝ Հարի՛ Բինիչ, Յահո՛ւղի, Էկե՛ք էստեղ, ընծի վրա թուղթ է էկե:

Էկան էտտեղ Քաջաց թագավորի վագիրներ:

—Առեք էս թուղթ կարդացե՛ք:

Վագիրներ առան կարդացին թուղթը՝ էթաս ընտե, որ չիտես էնի, բերես էնի, որ չիտես էնի:

Թագավորն ասավ վագիրներին. —Գտեք էս բանը բերե՛ք, տանք մեր հուրի-փարիքի փեսին, տանա, էթա:

Վագիրներ հեկան ձիավոր քըցին, դոշուն պըտըտցրին, քարափները ման էկան, որքան պըտըտան, չըկարցան գտնել:

Էկան թագավորին ասին. —Թագավո՛ր, չըկարցանք գտնիլ:

Թագավորն ասավ ավչուն. —Ողաճի՛ն ավչի, քու ուզած մեր կուշտ չի, Օձի թագավորի կուշտն է:

Ավչին ասավ թագավորին. —Օձի թագավոր ո՞րտեղ գտնեմ:

—Ես քեզի թուղթ կուտամ, առ գնա՛:

Թուղթ տվեց, տարավ, գնաց մոտ Օձի թագավոր: Տվեց Օձի թագավորին, Օձի թագավոր առավ իշկաց, դանչեց ուր վագիրներուն՝ Շահմա՛ր, Լոնդո՛, Իլա՛ն, արե՛ք իստե, Քաջաց թագավորից մեզի թուղթ է էկե, առեք էս թուղթ կարդացե՛ք:

Թուղթն կարդացին, ասին. —Օձի՛ թագավոր, էս մարդու ուզածը գտի՛, տո՛ւր, թո տանա:

Քցեց ման էկան, իրեք օր ման էկան, չըկարցան գտնել:

Դարձան էկան ասին. —Թագավո՛ր, չըկարցանք գտնել: Հողա-ծի՛ն ավչի, քու ուզածը մեր կուշտ չի:

Ավչին ասավ. —Թագավո՛ր, ապա ո՞րդի ա:

—Մկան թագավոր որ չըգտնի, էլ չեն կանա գտի:

—Հապա ես ի՞նչդ էթամ Մկան թագավոր գտնե՞մ:

—Ես քեզի թուղթ կըտամ:

Օձի թագավորը գրեց մե թուղթ, տվեց ավչուն, ձիավոր տվեց ավչուն, ասավ՝ տարեք նշանց տվեք, թո էրթա:

Տարան նշանց տվին ավչուն, ասին.—Ավչի՛, Մկան թագավոր էտ Սև սարն ա:

Ավչին հելավ գնաց, թուղթ տվեց Մկան թագավորին: Մկան թագավորն առավ թուղթն իշկաց, դանչեց ուրան վազիրներին՝ Քաչա՛լ Չարքազ, Մըղրե՛զ, Դալի-բա՛չ, էկե՛ք, Օձի թագավորից մեզի թուղթ է էկե:

էկան, կարդացին թուղթը, ասին.—էս հողածնի ուզած գտի՛ր, տո՛ւր, թո տանե, էրթա:

—Դե հեկե՛ք, Քաչա՛լ Չարքազ, Մըղրե՛զ, Դալի-բա՛չ, գնացե՛ք, գտեք բերե՛ք:

Գնացին, ինչքան ման էկան, չըկարցան գտնի: Դարձան էկան թագավորին ասին, թե՛ չըգտանք:

Թագավորն ասավ.—Հողածի՛ն, քու ուզած մեր կուչտ չի:

Ավչին ասավ.—Թագավո՛ր, ապա որտե՞ղ ա:

Ասավ.—Թե գտնի, Գորտնկի թագավոր գտնի, մենք չենք կանա գտնի:

—Թագավո՛ր, ես Գորտնկի թագավոր որտե՞ գտնեմ:

—Ես քեզի թուղթ կըտամ, մարդ կըտամ, կառնես կէթաս:

Թուղթ տվեց, ձիավոր տվեց ավչուն, տարան նշանց տվին: Տարավ տվեց Գորտնկի թագավորին:

Գորտնկի թագավոր առավ թուղթն իշկաց, կանչեց ուրան վազիրներին՝ Բաթմա՛ն, Փանփա՛լ, Կանա՛նչ, արե՛ք ըստե, Մկան թագավորից մեզի թուղթ ա էկե: Առեք կարդացե՛ք:

Առին, կարդացին, ասին.—էս հողածնի ուզածն գտի՛, տո՛ւր, թո տանե էթա:

—Փանփա՛լ, Բաթմա՛ն, Կանա՛նչ, գնացե՛ք, Դելագորին գտեք բերե՛ք,—ասավ թագավորը:

Գնացին Դելագորին գտան բերին:

Թագավորն ասավ.—Դելագո՛ր, էս հողածնի ուզածը որտեղ ըլնի, գտնես բերես:

Դելագորն ասավ թագավորին.—Որ նեղին ես, Դելագորին կըձանչընաս, որ լենին ես, Դելագորին կաքսորես:

—Բան չըկա, Դելագո՛ր, բան չըկա,—ասավ թագավորը,—կըխնդրվեմ ներես:

—Դե արի՛, հողածի՛ն, արի էրթանք,—Դելագորն ասավ:

Հողածնին տարավ մե մեչի մեջ, ասավ.—Հողածի՛ն, դու նստի՛ ըստե, ես էթամ մե պըտըտեմ, գամ:

Գնաց պըտըտելու Դելագոր:

էտ հողածինը էնքան նստավ ըտե, Դելագոր չեկավ, հելավ տե-
սավ, որ մեչի մեջ մե կրակ կրվառի. գնաց էտ կրակի կուչտ, տե-
սավ, որ մեկ պղտի քոչկ-սարա ա: Մտավ նես, տեսավ՝ մեկ մարդ
նստուկ ա. բարե տվեց էտ մարդին, նստան, խոսացին: Էն մարդը
ավչուց հարցմունք արավ, թե՝ ի՞նչ մարդ ես, ավչի՛, ինչ կըպըտը-
տես, ընկեր ունե՞ս, թե՞ չէ:

Ասավ.—Ընկեր ունիմ, Գորտնուկը իմ ընկերն ա:

Ասավ.—Հապա ո՞ւր ա Գորտնուկ:

—Գնաց էս մեչի մեջ, չեկավ:

—Բան չունես, Գորտնուկ ա, եսիմ որտե գնաց, —ասավ քոչկ ու
սարի տերը: —Անոթի չե՞ս:

—Անոթի եմ:

Քոչկ սարի տեր ասավ.—Աֆանդի՛, մեզի ղոնաղ է էկե, խա՛ց
բե:

Աֆանդին խաց բերեց, ավչին իշկաց տեսավ՝ մարդ չըկա, հա-
մա խաց պատրաստվավ:

Խաց կերան պրծան, ասավ.—Աֆանդի՛, արի խա՛ց տար:

Ավչին տեսավ՝ մարդ չըկա, համա խաց տարան:

Ավչին ասավ էն մարդին.—էս ի՞նչ լավ նոքար ունես:

—Կրծախեմ, ավչի՛, չե՞ս առնե:

—Կառնեմ:

—Ի՞նչ կըտաս:

—Զատ չունեմ:

—Հապա ինչո՞վ կառնես:

—Բախչես ինձի:

—Բախչեցի, տար գնա՛:

Ավչին հելավ դանչեց.—Աֆանդի՛, արի էթանք:

Ընկան ճամփա, էկան: Մե քուրդ ուստ էկավ, մե չոմախ կար
վըր թեկին էրկըթից, էտ քուրդը անոթի էր, ավչուց խաց ուզեց:

Ավչին ասավ.—Աֆանդի՛, էս քրդուն խա՛ց տուր:

Խացն էկավ քրդու կուչտ, Աֆանդին չերեաց:

էտ քուրդը ասավ ավչուն.—էտ քու Աֆանդին չե՞ս ծախե, ես
առնիմ:

—Ձէ՛, չեմ ծախե:

Քուրդն թողեց, գնաց:

Աֆանդին ասավ ավչուն.—Ավչի՛, ինչի՞ չըծախիր: Ծախա՛,
ես կուգամ կըխասնեմ քեզի էլման: Քրդու չոմախն ա՛ռ, ինձի տո՛ւ
քրդուն:

Ավչին դանչեց քրդուն.—Քո՛ւրդ, արի՛, Աֆանդուն կըծախեմ:

Քուրդը էկավ, ասավ.—Ինչո՞վ կուտաս, քի՛րվո:

—Քու չոմախ տո՛ւ ընձի, Աֆանդուն տամ քեզի:

Փոխեցին: Ավչին առավ չոմախ գնաց, քուրդն առավ Աֆանդին գնաց: Մե խելի տեղ գնացին, դարձավ էկավ, հասավ ավչուն: Քուրդը էնքան կանչեց Աֆանդուն, Աֆանդին ձեն չըտվեց: Ավչին ու Աֆանդին էկան, էկան մե չարչու ոստտ էկան, էտ չարչին էլ էտ ավչուց խաց ուզեց, Ավչին ասավ Աֆանդուն. «Աֆանդի՛, չարչուն խա՛ց տուր», Աֆանդին չարչուն խաց տվեց, չերեաց: Չարչին ասավ ավչուն. «Ավչի՛, էտ ինչ լավ աշպեղ ունես»:

—Հա՛, հըպա, ինձի լավ աշպեղ ունեմ:

—Չես ծա՞խե, ես առնեմ:

—Կըծախեմ, չարչի՛:

—Ի՞նչ տամ:

—Բե՛ իմ դուժու հետ փոխեմ:

Բերին փոխին: Չարչին առավ Աֆանդին, գնաց, ավչին առավ դուժին, գնաց: Աֆանդին դարձավ էկավ, հասավ ավչուն: էկան խասան քաղաք: Գնաց մոտ թագավոր:

—Հը, ավչի՛, բերի՞ր:

—Չէ՛, թագավո՛ր, չըկարցա գտնի:

—Արի կո՞վենք, —ասավ թագավոր:

—Կո՞վենք:

Ավչին, թագավոր կովան: Ավչին հայ արավ Աֆանդուն: Աֆանդին ըսպանեց թագավորին. թագավորութեն տվեցին ավչուն, թագավորի տղեն էլ ոխվան, դոշուն վերցին, ավչու հետ սկսին կոխվ: Ավչին կասեր Աֆանդուն՝ դուժու դո՛ւռ բաց, դուժու դուռ որ կըբաներ, դոշուն կէլներ էն դուժու միջեն, էն դոշուն կըջարդեր: Աֆանդի չոմախ կըթալեր, չոմախ դոշունին կըջարդեր: Ըսպանին դոշունին, թագավորի տղեններին, առավ թագավորի թախտ, էլավ Պարոն ավչի: էնի հասավ ուր մուրազին, մենք էլ հասնինք մեր մուրազին: